

ՎԱՍՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

ՃԱՌ ՎՍԵՄ. ՏԻԱՐ ԱԼԵՔՍ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

Ամենապատիւ Պատրիարք Սրբազան,
Գերաշնորհ Շահէ Արք. Աճէմեան,
Գերաշնորհ, Հոգեշնորհ եւ Արժանապատիւ Հայրեր,
Սիրելի հիւրեր եւ բարեկամներ.

Պատրիարք Սրբազան Հօր այցը թէեւ կը կրէ անպաշտօն
ընոյթ, սակայն ան մեղի կը բերէ դարաւոր պատմութեան մը ամ-
բողջ շունչն ու իրականութիւնը:

Ամերիկայի մէջ յաճախ կ'ափսոսանք թէ որքան հեռացած
ենք մեր պատմութեան արմատներէն, մեր ազգային արժէքներէն
եւ մեր նուիրապետական Աթոռներէն. սակայն այսպիսի ներշնչող
առիթները յանկարծ կը բերեն ու մեր պատմութիւնը կը միախառ-
նեն մեր առօրեային: Ու մենք ազգովին կը զգանք թէ տակաւին
անբաժան կը մնայ այդ պատմութիւնը մեր կեանքէն. ան կենդանի
կերպով կ'ապրի մեր մէջ:

Պատրիարք Սրբազան Հայրը խորհրդանշին է այդ դարա-
ւոր անցեալին. իր ներկայութեամբ մենք հաղորդակից կը դառ-
նանք այդ պատմութեան. կը տեսնենք ու կը զգանք այդ պատմու-
թեան ողբերգական այլ վսեմ ընթացքը շարժումի մէջ:

Եւ մենք պէտք ունինք այդ ապրումին՝ Հայ մնալու եւ Հայ
ապրելու համար այս ամերիկայ:

Երուսաղէմի Պատրիարքութիւնը մեր նուիրապետական
չորս Աթոռներէն մին է, որ կոչուած է կենսական դեր մը կատարե-
լու մեր ապագայ կեանքին մէջ: Մեր երկար ու տառապալից անց-
եալին մէջ ունեցած ենք նուիրապետական Աթոռներ, վանքեր ու
ընծայարաններ, սակայն ճակատագիրը լուրջեան դատա-
պարտած է զանոնք. այսօր աւերակ են Աղթամարի եւ Սիսի Կաթ-
ղիկոսանիստ վանքերը, Գլաճորի, Սանահինի եւ Տաթևի կրթա-
րանները, բայց կանգո՛ւն է Երուսաղէմի Աթոռը, իր անցեալի
փառքերով ու պանծերով:

Քրիստոսի ծննդավայրը, որ խաղաղութեան օրրան մը
պէտք էր հանդիսանար՝ չարչարուած է նոյնինքն Քրիստոսի չափ.
եւ այդ չարչարանքէն անմասն չէ մնացած Երուսաղէմի Սրբոց Յա-
կորեանց Միաբանութիւնը: Ամէն արշաւողի գլխաց՝ ընկրկած է

ան, ամէն ցաւի դիմաց ցնցուած է ան, սակայն, գիտցած է դարձեալ ոտքի կանգնիլ ու շարունակել իր դարաւոր ճամբան:

Այդ անհաւատալի վերապրումը մենք կը պարտինք Միաբանութեան անխորտակելի կամքին ու նուիրումին: Այդ Միաբանութիւնը երբեմն արցունքով, երբեմն զիւնազխառութեամբ, երբեմն հնարամտութեամբ եւ երբեմն նոյնիսկ բռնեցքով պահպանած է մեր դարաւոր իրաւունքները՝ Սուրբ Տեղեաց մէջ: Իւրաքանչիւր եկեղեցի, մասնու, նշխար ու քար պահպանուած են դարաւոր հսկումով եւ օրինակելի նախանձախնդրութեամբ:

Որքան բուռն եղած է պահպանութեան այդ պայքարը՝ նոյնքան մեծ է մեր հպարտութիւնը այսօր Երուսաղէմով: Այսօր, աշխարհի մեծագոյն կրօնքներուն հաւասար իրաւունքներ ունինք Սուրբ Տեղեաց մէջ. եւ հաւանաբար Երուսաղէմը սփիւռքի միակ վայրն է ուր Հայութիւնը կը վայելէ միջազգային ճանաչում:

Եղիշէ Սրբազան արժանաւոր յաջորդն է Աթոռին վրայ բազմած մեծանուն Պատրիարքներուն, եւ իր անձին մէջ կը խոստովանէ անոնց փորձառութիւնն ու ներշնչումը. անոր սրբազան առաքելութեան մէջ կը վերապրին այսօր Արրահամ Պատրիարքներու հեռատեսութիւնը, Շղթայակիրներու զոհարելութիւնն ու Գուշական Պատրիարքներու գրական ու հոգեւոր արժանիքները:

Մենք բախտաւոր ենք որ աշխարհի այդ զգայուն հանգոյցին վրայ ունինք Եղիշէ Պատրիարքին նման իմաստուն ու բանիմաց հոգեւոր առաջնորդ մը, որուն գործունէութիւնը պիտի երաշխաւորէ Պատրիարքական Աթոռին անսասան պահպանումը:

Բացի պատմական ու հոգեւոր իր հանգամանքներէն՝ Երուսաղէմի Պատրիարքաբանը կը հանդիսանայ արտասահմանի մեր մշակութային գանձարաններէն ամէնէն հարուստը: Այնտեղ կը պահպանուին հազարաւոր ձեռագիրներ, մանրանկարչական գործեր, պատմաբժէք զգեստներ, դանձեր ու եկեղեցական իրեղէններ: Եւ այսօր, երբ բուռն հետաքրքրութիւն մը կայ մեր մէջ մեր ազգային ժառանգութեանց նկատմամբ, այդ հարստութիւնները մեր կեանքը ճոխացնող ու մեզ հպարտացնող անփոխարինելի արժէքներ կը դառնան:

Շնորհիւ Պատրիարք Հօր ուղիղ կեցուածքին՝ Երուսաղէմի Պատրիարքութիւնը այսօր դարձած է լրացուցիչ հաստատութիւնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, դարձած է թեւ ու թիկունք Ամենայն Հայոց Հայրապետութեան:

Վերջին քսանամեակին, երբ մեր ազգային-եկեղեցական կեանքը անընդաւ իր ամէնէն զգուար ժամանակները, Երուսաղէմի Սրբազան Պատրիարքը, իր իմաստութեամբ եւ յայտնատեսութեամբ, իր խորհուրդներով եւ գրական կեցուածքով, բարձր պահեց Սուրբ Էջմիածնի նախամեծար դիրքն ու հանգամանքը:

իր բարոյական հսկայ նշանակութենէն դուրս, մենք մեծ յոյսեր կապած ենք նաեւ Երուսաղէմի Պատրիարքութեան՝ մեր ամէնէն գործնական պահանջներուն մէջ:

Այսօր պարզ իրողութիւն է որ Սուրբ Էջմիածինը չի կրնար ամբողջութեամբ գոհացնել հոգեւորականներու պատրաստութեան մեր պահանջները: Մասնաւորաբար մենք պէտք ունինք պատրաստուած, հմուտ ու նուիրեալ եկեղեցականներու, որոնք պիտի գան հովուելու Ամերիկայի մեր եկեղեցիները: Բարեբախտաբար Երուսաղէմը կամովին ստանձնած է այդ պարտականութիւնը եւ արդէն մեզի շնորհած է կարեւոր թիւով հոգեւորականներ: Ներկայ դրութեամբ մենք կ'ակնկալենք որ այդ գործը աւելի հիմնաւորուի, դառնայ աւելի կազմակերպեալ, մասնաւոր երբ մեր Պատրիարքը ունի ձեռնհաս ու փորձառու գործակիցներ:

Արդարեւ, այսօր իր կողքին կը գտնուի իր ամէնէն արժանաւոր գործակիցներէն մէկը, յանձին Շահէ Արքեպիսկոպոս Աճէմեանի: Անոր բազմաթիւ իրադործումներուն վերջինը՝ Ժառանգաւորաց Վարժարանի շէնքին կառուցումն էր. մենք ամբողջ շինութեան ընթացքին տեղեակ մնացինք թէ ինչպիսի վարչական, գործնական եւ այլ դժուարութիւններ յառաջացան. եւ Շահէ Սրբազան իր հմտութիւնն ու կամքը ի գործ դնելով՝ ամբողջացուց այդ շէնքը: Բնականաբար շէնքը ինքնին այնքան նշանակալից պիտի չըլլար, եթէ ան մնար լոկ քարեղէն կառոյց մը. սակայն, դարձեալ շնորհիւ Շահէ Արքեպիսկոպոսի աշխատանքներուն, Ժառանգաւորաց այդ շէնքը ստացած է շունչ ու ոգի եւ հեռզհեռէ կը դառնայ օճախ մը՝ լայն թիւով կղերականներու պատրաստութեան:

Սփիւռքը եւ մասնաւորաբար մեր գաղութը արդար ակրնկալութիւնը ունին որ կարճ ժամանակի մը մէջ Երուսաղէմի վանքը ի վիճակի ըլլայ գոհացնելու մեր հոգեւոր առաջնորդներու կարիքը. հասցնէ հմուտ, գիտակից եւ ծառայասէր եկեղեցականներու նոր յոյլ մը: Այդ իմաստով ալ Երուսաղէմն է իրաւ լրացուցիչը Ս. Էջմիածինին, առանց մրցակցութեան՝ լծակից դառնալով անոր:

Յանձինս Պատրիարք Սրբազան Հօր եւ Շահէ Արքեպիսկոպոսին մենք մեր մէջ կ'ընդունինք մեր ամէնէն նուիրական հաստատութիւններէն մէկուն արժանաւոր ներկայացուցիչները: Մեր հոգեւոր եւ ազգային կեանքին մէջ ճակատագրական դեր մը ունին Երուսաղէմի Աթոռն ու անոր Սրբազան ներկայացուցիչները: Եւ վստահ ենք թէ մեր ճակատագրին այդ բաժինը կը գտնուի ապահով ձեռքերու մէջ: Այդ ձեռքերը պիտի գործեն շինարար ճիգերով, որպէսզի հարստանայ մեր կեանքը, որպէսզի աւելի խորունկ կերպով կապուինք մենք մեր եկեղեցիին եւ մեր արմատներուն եւ որպէսզի աւելի ուժգնօրէն Հայ ապրինք մենք:

Բարի գալուստ Ձեզի Պատրիարք Սրբազան Հայր, եւ Դիւանապետ Շահէ Արքեպիսկոպոս. եւ յաջողութիւն Ձեր նուիրական առաքելութեան: